

4364

ՀԱՐԱՐԱԿ

Ծ Ր Ե Ռ Ի Ր Ը

Յ Ե Վ

ԱՆՆԱՆԵՐՈՒԹՅԱՆԵՐ

3 KՈ

2-22

ՀԱՅԿԱՆ ԿՆՅՈՒՆ 1933

ԵՐԵՎԱՆ

11 JUL 2005

Հանրապետության բոլոր յերկրներին հասցի  
11 NOV 2009

ՅՔՊ  
2-22

1009  
39403

4036

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
(ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԻ)  
ԿՈՍՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՔԸ  
ՅԵՎ, ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

0189 8/139



ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
1933

մշակել համառի արհային VI կոնգրեսի կողմից ընդունված՝ կոմունիստական ինտերնացիոնալի ծրագրի և ՆՍՀՄ մեջ ձեռք բերված սոցիալիստական շինարարութան հաջողութիւնները հիման վրա՝ (տես Համ Կ(ը)ի XVI համագումարի սղագրական հաշվետիւութիւնը, էջ 123, 1931 թ. հրատարակութիւնը):

ՀԱՄ Կ(Բ)Կ

Ծ Ր Ա Գ Ի Ր Ը

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
VIII ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ

(1919 ԹՎի մարտի 18 — 23)

1917 թվի նոյեմբերի 7-ի (հոկտեմբերի 25-ի)

Հոկտեմբերյան հեղափոխութիւնը Ռուսաստանում  
երազուրձեց պրոլետարիատի դիկտատուրան, չքավոր  
դուրգացիութեան կամ սկսապրոլետարիատի ոգնու-  
թեամբ պրոլետարիատն սկսեց կոմունիստական հա-  
սարակութեան հիմքը կառուցել Հեղափոխութեան  
զարգացման ընթացքը Գերմանիայում և Ավստրո-  
Հունգարիայում, պրոլետարիատի հեղափոխական  
շարժման աճումը բոլոր տառջավոր յերկրներում, այդ  
շարժման խորհրդային ձևի տարածումը, այսինքն  
այնպիսի ձևի, վորի նպատակն է պրոլետարիատի  
դիկտատուրայի ուղղակի իրագործումը,—այս բոլորը  
ցույց տվեց, վոր սկսվել է համաշխարհային պրոլետա-  
րական կոմունիստական հեղափոխութեան զարազրջումը:

Այդ հեղափոխութեանն անխուսափելի արդուք  
եր կապիտալիզմի զարգացման, վորը դեռևս տիրա-  
պետում է քաղաքակիրթ յերկրները մեծ մասում:  
կապիտալիզմի և բուրժուական հասարակութեան  
եյութիւնը մեր հին ծրագիրը ճշտորեն, յեթի չհաղ-  
վենք կուսակցութեան՝ սոցիալ-դեմոկրատական վոչ  
ճիշտ անունը, բնորոշել և հետևյալ դրութիւններով.

«Այդպիսի հասարակութեան դիւստր հատկա-  
նիշը ապրանքային արտադրութիւնն է, վոր հիմն-

ված և կապիտալիստական արտադրական հարաբե-  
րությունները վրա, վորոնց առկայութեան դեպքուս  
արտադրութեան միջոցները և ապրանքները ջրջանա-  
ռութեան ամենից կարևոր և նշանակալի մասը պատ-  
կանում և քանակով փոքրաթիվ մի դասակարգի ան-  
ձերի, մինչդեռ ընակչութեան խոշոր մեծամասնու-  
թյունը կազմում են պրոլետարները և կիսապրոլե-  
տարները, վորոնք իրենց անտեսական դրութեամբ  
բախտված են շարունակ կամ պարբերաբար վաճառել  
իրենց բանվորական ուժը, այսինքն կապիտալիստ-  
ները վարձկանը դառնալ և իրենց աշխատանքով  
հասարակութեան բարձր դասակարգերի յեկամուսն  
ռանդծել:

Կապիտալիստական արտադրական հարաբերու-  
թյունները անխառնաձայն ջրջանակ ալիքի ու ալիքի  
յե ընդայնվում, վորչափ վոր տեխնիկայի մշտական  
կատարելագործումը մեծացնելով խոշոր ձեռնարկու-  
թյունները անտեսական նշանակութեանը, դուրս և  
մղում մանր ինքնուրույն արտադրողներին՝ նրանց  
մի մասին պրոլետար դարձնելով, փոքրածները դեբը  
սահմանափակելով հասարակական-անտեսական կյան-  
քում և տեղ-տեղ նրանց քիչ թիվ շատ լիակատար,  
քիչ թիվ շատ բացահայտ, քիչ թիվ շատ ծանր կախման  
մեջ դնելով կապիտալից:

Բացի այդ՝ նույն տեխնիկական պրոդրեսը հնարա-  
վորութեան և առկա ձեռնարկատերերին ալիքի մեծ  
չափով կիրառել կանանց և յերեսաների աշխատանքն  
ապրանքները արտադրութեան և ջրջանառութեան

պրոցեսում: Իսկ վորովհետև, մյուս կողմից, ձեռնար-  
կատերերի մոտ նա հարաբերականորեն պակասեց-  
նում և բանվորական կենդանի ուժի կտրիքը, բան-  
վորները ուժի պահանջն անհրաժեշտաբար հետ և  
փնում նրա առաջարկից, վորի հետևանքով մեծանում  
և վարձու աշխատանքի կախումը կապիտալից և բար-  
ձրանում նրա զահագործման աստիճանը:

Այսպիսի դրությունը բուրժուական յերկրների  
ներսում և նրանց մշտապես սրվող փոխադարձ մրցու-  
թյունը համալսարնային շուկայում ալիքի ու ալիքի  
յե ղժվարացնում ապրանքների վաճառահանութեան-  
նր, վորոնք միշտ աճող քանակով են արտադրվում:  
Գեքարտադրութեանը, — վոր յերեան և գալիս քիչ թիվ  
շատ սուր արդյունաբերական ճշնաժամի մեջ, վորոնց  
հետևում են արդյունաբերութեան կանգ առնելու  
քիչ թիվ շատ տեսական ջրջաններ, — բուրժուական հա-  
սարակութեան արտադրողական ուժերի դարգացման  
անխուսափելի հետևանքն է: Ծղնաժամերը և արդյու-  
նաբերութեան լճացման ջրջաններն իրենց հեթիլն  
ալիքի ևս քայքայում են մոտը արտադրողներին,  
ալիքի ևս մեծացնում են վարձու աշխատանքի կա-  
խումը կապիտալից, ալիքի ևս արտադրանքում բանվոր  
դասակարգի դրութեան հարաբերական, իսկ յերեան  
ևլ բացարձակ վատթարացումը:

Այսպիսով տեխնիկայի կատարելագործումը, վոր  
նշանակում և աշխատանքի արտադրողականութեան  
ալիքացում ու հասարակական հարստութեան նաճում,  
բուրժուական հասարակութեան մե պայմանավորում

և հասարակական անհավասարութեան աճումը, ունեւորները և չունեւորները միջև յեղած տարածութեան մեծացումը՝ աշխատավոր մասսաները ելավելի լայն խավերի համար ապրուստի անսպասելիութեան, անգործութեան ու բազմատեսակ զրկանքների աճումը:

Բայց բուրժուական հասարակութեանը հատուկ այս բոլոր հակասութիւնների աճումին ու զարգացմանը համաչափ՝ աճում ե նաև աշխատավոր և շահագործվող մասսայի դժգոհութիւնը գոյութիւն ունեցող կարգերից, աճում ե պրոլետարների թիվն ու համախմբվածութիւնը և սրվում ե նրանց պայքարն իրենց շահագործողները դեմ: Միևնույն ժամանակ տեխնիկայի կատարելագործումը, համակենարոնացնելով արտադրութեան և ջրջանառութեան միջոցները և հանրայնացնելով աշխատանքի պրոցեսը կապիտալիստական ձեռնարկութիւններում, ավելի ու ավելի արագ նյութական հնարավորութիւն և ստեղծում կապիտալիստական արտադրական հարաբերութեաննաները կոմունիստականով փոխարինելու համար, այսինքն՝ այն սոցիալական հեղափոխութիւնը, վորը միջազգային կոմունիստական կուսակցութեան՝ վորպես դասակարգային շարժման գիտակից արտահայտչի՝ ամբողջ գործունեիւթեան վերջնական նպատակն ե կազմում:

Փոխարինելով արտադրութեան և ջրջանառութեան միջոցները մասնավոր սեփականութիւնը հասարակականով և հասարակական-արտադրողական պրոցեսի պլանաչափ կազմակերպութիւն մտցնելով՝ հասարա-

կութեան բոլոր անդամները բարեկեցութիւնն ու բազմակողմանի զարգացումն ապահովելու համար՝ պրոլետարիատի սոցիալական հեղափոխութիւնը կվոչնչացնի հասարակութեան բաժանումը դասակարգերի և դրանով կազատաբերի ձեռքած ամբողջ մարդկութիւնը, քանի վոր վերջ կդնի հասարակութեան մի մասը մյուսի կողմից շահագործելու բոլոր ձեւերին:

Սոցիալական այս հեղափոխութեան անհրաժեշտ պայմանը պրոլետարիատի շիկտատուրան ե, այսինքն, վոր պրոլետարիատը նվաճի բաղաբալան մի այնպիսի իշխանութիւն, վորը նրան հնարավորութիւն տա ձեռքու շահագործողները ամեն մի շիկտադրութիւն: Նպատակ ունենալով ընդունակ դարձնել պրոլետարիատին իրագործելու պատմական իր մեծ միսիան, միջազգային կոմունիստական կուսակցութիւնը կազմակերպում ե նրան վորպես բոլոր բուրժուական կուսակցութիւններին հակադիր ինքնուրույն քաղաքական կուսակցութիւն, դեկավտրում և նրա դասակարգային պայքարի բոլոր արտահայտութիւնները, նրա առջև մերկացնում շահագործողները և շահագործվողները շահերը անհաշտ հակադրութիւնը և պարզաբանում և նրան առաջիկա սոցիալական հեղափոխութեան պատմական նշանակութիւնն ու անհրաժեշտ պայմանները: Իրա հետ միասին՝ նա մնացած աշխատավոր և շահագործվող ամբողջ մասսայի առջև յերևան ե հանում նրա դրութեան անհուսալիւթիւնը կապիտալիստական հասարակու-

Թյան մեջ և սոցիալական հեղափոխության անհրա-  
ժեշտությունը հանուն նրա սեփական ազատագրման  
կապիտալի ճնշումից: Բանվոր դասակարգի կուսակ-  
ցությունը՝ կոմունիստական կուսակցությունը դեպի  
իր շարժերն և կոչում բնակչության աշխատավոր  
և շահագործվող բոլոր խավերին, փրչափով նրանք  
պրոլետարիատի տեսակետին են անցնում:

Կապիտալի համակենտրոնացման և կենտրոնաց-  
ման պրոցեսը, վոչնչացնելով ազատ մրցումը, XX  
դարի սկզբից առջև բերեց կապիտալիստները հզոր  
մենաշնորհային միություններ՝ սինդիկատներ, կար-  
տեղներ, արեստներ, վորոնք վճռական նշանակու-  
թյուն ստացան ամբողջ տնտեսական կյանքում, միախառ-  
նեց բանկային կապիտալն արդյունաբերականին,  
անագին չափերով համակենտրոնացրեց կապիտալը  
և դարկ տվեց նրա ուժեղ արժանանմանը դեպի ոտար  
յերկրները Տրեստները՝ ընդգոյհելով կապիտալիստա-  
կան պետություններին ամբողջ խմբեր, ձևանարկեցին  
աշխարհի տնտեսական վերաբաժանմանը, աշխարհի,  
վորն ամենահարուստ յերկրները միջև ֆերիտորիալ  
կերպով արդեն իսկ բաժանված էր: Ֆինանսական  
կապիտալը այդ դարաշրջանը, վոր անխուսափելի կեր-  
պով սրում և պայքարը կապիտալիստական պետու-  
թյունները միջև, իմպերիալիզմի դարաշրջանն և:

Այստեղից անխուսափելիորեն բխում են իմպե-  
րիալիստական պատերազմներ, պատերազմներ վաճա-  
ռահանման շուկաների, կապիտալի գործադրության  
ընթացիկները, հումուլթի և բանվորական ուժի համար,

այսինքն՝ աշխարհի տիրապետության և մանր ու  
թույլ ժողովուրդները վրա իշխելու համար: Հենց  
այդպիսի բնույթ ունի 1914—1918 թթ. առաջին մեծ  
իմպերիալիստական պատերազմը:

Յեզ համաշխարհային կապիտալիզմի գարգաց-  
ման չափազանց բարձր աստիճանն ընդհանրապես,  
և՛ ազատ մրցման փոխարինումը պետական-մե-  
նաշնորհային կապիտալիզմով, և արդյունքնե-  
րի արտագրության ու բաշխման պրոցեսի հա-  
սարակական կարգավորման ապարժատ պատերա-  
տելը բանկերը, այլև կապիտալիստները միություն-  
ները՝ միջոցով, և՛ կապիտալիստական մենաշնորհները  
անման հետ կապված՝ Թանգության և սինդիկատնե-  
րի գործադրած ճնշման աճումը բանվոր դասակարգի  
վրա, սրա ստրկացումն իմպերիալիստական պետու-  
թյան կողմից, պրոլետարիատի տնտեսական և քա-  
ղաքական պայքարի անագին դժվարացումը, և՛ իմ-  
պերիալիստական պատերազմից առաջացող սարսափ-  
ները, արհավիրքներն ու ավերածությունները, — այս  
ամենն անխուսափելի յե դարձրել կապիտալիզմի կոր-  
ծանումը և անցումը հասարակական տնտեսության  
մի ավելի բարձր տիպի:

Իմպերիալիստական պատերազմը չի կարող  
փրչանալ վոչ միայն արդարացի հաջողությամբ, այլև  
ընդհանրապես նրանով, վոր բուրժուական կռուվա-  
րությունները քիչ թե շատ կայուն հաջողություն  
կնքեն: Կապիտալիզմի դարգացման հասած աստիճա-  
նի վրա պատերազմն անխուսափելիորեն վերածվել

և մեր աչքի առաջ վերածվում ե շահագործվող ազ-  
խատավոր մասսաների, նրանց դուրսն անցած պրո-  
լետարիատի քաղաքացիական պատերազմի՝ ընդդեմ  
բուրժուազիայի:

Պրոլետարիատի աճող դրոճը և մանավանդ նրա  
հաղթուեթյուններն առանձին յերկրներում՝ ուժեղաց-  
նում են շահագործողներին դիմադրուեթյունը և առաջ  
են բերում կապիտալիստների միջնորդային միավոր-  
ման նոր ձևեր (Ազգերի լիգա և այլն), վորոնք հա-  
մաշխարհային մասշտաբով կազմակերպելով յերկրա-  
գնդի բոլոր ժողովուրդներին սիստեմատիկ շահագոր-  
ծումը, առաջին հերթին իրենց ջանքերն ուղղում են  
անմիջականորեն ճնշելու բոլոր յերկրների պրոլե-  
տարիատի հեղափոխական շարժումները:

Այս բոլորն անխուսափելիորեն զուգորդում են  
առանձին պետուեթյունների ներսում մղվող քաղա-  
քացիական կռիվը այն հեղափոխական պատերազմ-  
ների հետ, վոր մղում են թե պաշտպանվող պրոլե-  
տարական յերկրները և թե ճնշվող ժողովուրդները՝  
լիմպերիալիստական պետուեթյունների լծի դեմ:

Այս պայմաններում պացիֆիզմի, կապիտալիզմի  
տիրապետուեթյան որով միջնորդային զինաթափման,  
միջնորդ դատարանների լողունդները և այլն՝ վոչ մի-  
այն ուսուցիչն ու առաջնորդն, այլև աշխատավորներին  
ուղղակի խաբելու միջոց, լողունդներ, վորոնց նպա-  
տակն է զինաթափել պրոլետարիատին և նրան հետու-  
պանել շահագործողներին զինաթափելու խնդրից:

Միայն պրոլետարական կոմունիստական հեղա-

փոխուեթյունը կարող է հանել մարդկուեթյունն իմպե-  
րիալիզմի և իմպերիալիստական պատերազմների  
ստեղծած փակուղուց: Ինչպես էլ վոր լինեն հեղա-  
փոխուեթյան դժվարուեթյունները և նրա հնարավոր  
ժամանակավոր անհաջողուեթյունները կամ հակահե-  
ղափոխական ալիքները—պրոլետարիատի վերջնական  
հաղթանակն անխուսափելի յե:

Համաշխարհային պրոլետարական հեղափոխու-  
եթյան այդ հաղթանակը պահանջում է առաջավոր  
յերկրների բանվոր դասակարգի լիակատար վստա-  
հուեթյունը, ամենասերտ յեղբայրական միուեթյուն և  
հեղափոխական գործողուեթյունների ըստ կարելոյն  
առավել միասնականուեթյուն:

Այս պայմաններն անխրաքործելի յեն, յեթե  
սկզբունքորեն վճռականապես չլիզվեն կապերը և ան-  
խնտ պայքարը չմղվի սոցիալիզմը բուրժուազիայի  
կողմից խնդաթյուրելու դեմ, վոր հաղթանակել է  
պաշտոնական սոցիալ-դեմոկրատական և սոցիալիս-  
տական կուսակցուեթյունների վերնախավերում:

Այսպիսի խնդաթյուրում է մի կողմից ոպրեժու-  
նիզմի և սոցիալ-դոկլինիզմի՝ խոքոթով սոցիալիզմի,  
դրժով՝ ռոկլինիզմի հոսանքը, սեփական սողգային  
բուրժուազիայի թալանչիական շահերի պաշտպանու-  
եթյունը հայրենիքի պաշտպանուեթյան կեղծ լողուն-  
գով քողարկելն ինչպես առաջաբառի, այնպես էլ  
հատկապես 1914 — 1918 թ. թ. իմպերիալիստական  
պատերազմի ժամանակ: Այս հոսանքն ստեղծվել է  
ճնորհիվ նրա, վոր առաջավոր կապիտալիստական

պետութիւնները կողոպտելով զադուլթային և թույլ  
ժողովուրդներին՝ հնարավորութիւն են տալիս բուր-  
ժուադիւային այդ կողոպուտով ձեռք բերված գերզա-  
հույթի հաշվին արտոնյալ վիճակի մեջ գնել և դրա-  
նով կաշառել պրոլետարիատի վերնախավերին, խա-  
ղաղ ժամանակում ապահովել նրանց մի տանելի  
քաղցնիական դոյութիւն և իր մտ ծառայութեան  
վերցնել այդ խավերի ղեկավարներին: Ոպորտու-  
նիստներն ու սոցիալ-ըովինիստները ծառայելով  
բուրժուազիային՝ պրոլետարիատի ուղղակի դասա-  
կարգային թշնամիներն են, մանավանդ այժմ, յերբ  
նրանք կապիտալիստներին հետ դաշնակցած, զինված  
ձեռքով ճնշում են պրոլետարիատի հեղափոխական  
զարժումն ինչպես իրենց, նույնպես և ոտար յեր-  
կրներում:


Մյուս կողմից՝ սոցիալիզմի բուրժուական խե-  
զաթիւրումն և ճկնտորոնի՝ հոսանքը, վոր հավասա-  
րապես նկատվում և բոլոր կապիտալիստական յեր-  
կրներում, վորը առատփում և սոցիալ-ըովինիստների  
և կոմունիստների միջև, պաշտպանելով միասնակա-  
նութիւն առաջինների հետ և փորձելով վերականգ-  
նել սնտնկացած II Ինտերնացիոնալը: Պրոլետարիա-  
տի պայքարի ղեկավարը՝ նրա ազատագրութեան հա-  
մար՝ հանդիսանում և միայն նոր III Կոմունիստա-  
կան ինտերնացիոնալը, վորը Զոկամներից մեկն և  
Համկի-ը: Այս Ինտերնացիոնալը փաստորեն ստեղծվել  
և նախկին սոցիալիստական կուսակցութիւններին  
խկապելու պրոլետարական տարրերից մի շարք ևեր-

կրներում, մանավանդ Գերմանիայում կոմունիստա-  
կան կուսակցութիւնները առաջանալով, իսկ ձեա-  
կանորեն հիմնվել և իր առաջին համագումարում՝  
1919 թ-ի մարտին, Մոսկվայում: Կոմունիստական  
ինտերնացիոնալը, վորը բոլոր յերկրները պրոլետարա-  
կան մասսաները մեջ ալելի ու ալելի համակրանք և  
ձեռք բերում, վոչ միայն իր կոչումով և վերադառ-  
նում ղեպի մարքսիզմ, այլ և իր ամբողջ դադափա-  
րական-քաղաքական բովանդակութեամբ, իր բոլոր  
դարժութիւններով իրագործում և Մարքսի հեղա-  
փոխական ուսմունքը՝ զոված բուրժուական-ոպոր-  
տունիստական խեղաթիւրումներից:

Ձարգացնելով պրոլետարական դիկտատուրայի  
կոնկրետ խնդիրները Ռուսաստանի վերաբերմամբ,  
վորի գլխավոր հատկանիշը ընկալութեան մտնը-բուր-  
ժուական խավերի թվական դերազանցութիւնն և,  
Համկի-ը հետևյալ կերպով և վորըում այդ նպա-  
տակները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Բուրժուական հանրապետութիւնը, նույնիսկ  
ամենադեմոկրատականը, վորը սրբագործվում և հա-  
մաժողովրդական, համազգային կամ արտազասակար-  
դային կամքի լոզունգներով, իրականում անխուսա-  
փելիորեն բուրժուազիայի դիկտատուրա յեր մնում,  
աշխատավորների անպայման փեժամանութիւնը մի բուր-  
կապիտալիստների փեժիկտալիստագործող և ճնշող մի մե-



1939  
39403

քենա՝ շնորհիվ այն բանի, վոր դոյությունն ունեւ հողի և արաադրութեան այլ միջոցների մասնաժողոր սեփականութեան: Մրան հակառակ, պրոլետարական կաս խորհրդային դեմոկրատիան ամբողջ պետական ապարաւի, տեղական և կենտրոնական, վարից-վեր, մըջտական և միակ հիմքը դարձրեց հենց կապիտալիզմից ճնշված դասակարգերի, պրոլետարների և ամենաչքավոր գոյուղացիները— կիսապրոլետարները, այսինքն բնակչութեան անազին մեծամասնութեան մասսայական կադմակերպութեանները:

Հենց դրանով խորհրդային պետութեանն իրադործեց, ի դեպ անհամեմատ ավելի լայն չափով, քան վորեւ այլ տեղ, տեղական և մարդային ինքնավարութեան, առանց վերելից նշանակվող վորեւ իշխանութեան: Գուսակցութեան նպատակն և անդու աշխատանքով իսկապես լիովին կենտրոնացել այդ դերագոյն տիպը դեմոկրատիզմի, վորն իր կանոնավոր գործառնութեան համար մասսաների կուլտուրականութեան, կադմակերպութեան և ինքնագործունեյութեան մակարդակը մշտական բարձրացում և սահանջում:

2. Հակառակ բուրժուական դեմոկրատիայի, վոր թաղցնում և բուրժուակիայի պետութեան դասակարգային բնույթը, խորհրդային իշխանութեանը բացորեն ընդունում և ամեն մի պետութեան անխուսափելի դասակարգային բնույթը, քանի բուրժուիկն չի չքացել հասարակութեան բաժանումը դասակարգերի և դրա հետ միասին՝ ամեն մի պետական իշխանու-

թեան: Խորհրդային պետութեանը, իր իսկ եյուութեամբ, ուղղված և շահագործողները դիմադրութեանը ճնշելուն, և խորհրդային սահմանադրութեանը կանգ չի առնում շահագործողներին քաղաքական իրավունքները զրկելու առաջին իսկ տունն առաջով այն, վոր ամեն մի ազատութեան լաբեյութեան և, յիթե հակասում և աշխատանքը կապիտալի ճնշումից ազատելուն: Անշեղ դուրս բերելով շահագործողները դիմադրութեան ճնշումը և դադարականորեն պայքարելով բուրժուական իրավունքները ու ազատութեանները բացարձակ բնույթի վերաբերմամբ խորապես արմատացած նախապաշարութեանը դեմ՝ միաժամանակ պրոլետարիատի կուսակցութեան խնդիրն և պարզաբանել, վոր քաղաքական իրավունքները զրկելն ու ազատութեան ինչպիսի սահմանափակում ել վոր լինի, դրանք անհրաժեշտ են բացառապես վորպես պայքարի ժամանակավոր միջոցներ՝ իրենց արտոնութեանները պայտպանելու կամ վերականգնելու դիտումով շահագործողները ձեռնարկած փորձերը դեմ: Վերանայելով մարդը մարդու միջոցով շահագործելու ոքիկտիկ հնարավորութեանը, կվերանա նաև այդ ժամանակավոր միջոցները անհրաժեշտութեանը, և կուսակցութեանը կձգտի սահմանափակել կամ լիովին վերացնել դրանք: -

3. Բուրժուական դեմոկրատիան սահմանափակվում եր ձեակնորեն տարածելով հավասարապես բոլոր քաղաքացիները վրա քաղաքական իրավունքները և ազատութեանները, ինչպիսիք են ժողովների,

միությունները, մասնուրի իրավունքները: Բայց իրոք բուրժուական դեմոկրատիայի ժամանակ ինչպես վարչական պրակտիկան, այնպես էլ գլխավորապես աշխատավորների տնտեսական ստրկությունը, վերջիններին միշտ դնում էին այդ ազատություններով ու իրավունքներով քիչ թե շատ լայն կերպով ոգարվելու անհնարին դրության մեջ:

Ընդհակառակը, պրոլետարիան դեմոկրատիան իրավունքները և ազատությունները ձեռնարկեց հուշակիրու փոխարեն դրանք փաստորեն տրամադրում է ամենից առաջ և ամենից շատ բնակչության հենց այն դասակարգերին, վորոնք ճնշվում էին կապիտալիզմից, այսինքն՝ պրոլետարիատին և դյուրացիությանը: Դրա համար խորհրդային իշխանությունը խլում է բուրժուակալից շինություններ, տպարաններ, թղթի պահեստներ և այլն՝ դնելով դրանք աշխատավորներին ու նրանց կազմակերպություններին լիակատար տրամադրության տակ:

Համ կի խնդիրն այն է, վոր աշխատավոր բնակչության էլ ավելի լայն խասաներ ներգրծվել դեմոկրատական իրավունքներից և ազատություններից ոչավելու համար և ընդլայնել դրա նյութական հասարակությունը:

4. Բուրժուական դեմոկրատիան դարերի ընթացքում ազդարարել է մարդկանց իրավահավասարություն՝ անկախ սեռից, կրոնից, ցեղից և ազգությունից, բայց կապիտալիզմը վոչ մի տեղ թույլ չի ավել իրապես իրագործելու այդ իրավահավասարու-

թյունը, իսկ իր իմպերիալիստական ստադիայում չափազանց սրել է ցեղային և ազգային ճնշումը: Միայն շնորհիվ նրա, վոր խորհրդային իշխանությունն ընդհատավորներին իշխանություն է, նա կարողացավ մինչև վերջը և կյանքի բոլոր ասպարեզներում, առաջին անգամ աշխարհում, անցկացնել այդ իրավահավասարությունը, կիպ մինչև կնոջ անհավասարության վերջին հեղքերի վոչնչացումն ամուսնական և առհասարակ ընտանեկան իրավունքի ասպարեզում: Ներկա մոմենտում կուսակցության խնդիրն է դերագանցապես դադարաբական և դատարարական աշխատանք կատարել՝ նախկին անհավասարության ու կանխակալ համոզմունքները բոլոր հեղքերը միանգամայն վոչնչացնելու համար, մանավանդ պրոլետարիատի և դյուրացիական հետամնաց խավերի մեջ:

Չսահմանափակվելով կանանց ձեռնարկած անհավասարությամբ՝ կուսակցությունը ձգտում է նրանց ազատել հնացած տնային տնտեսության նյութական ծանրությունից՝ փոխարինելով այդ տնտեսությունը կոմունա-տնկերով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական լվացքամեքով, մսուքներով և այլն:

5. Անհամեմատ ավելի մեծ հնարավորությունն ընձեռնելով աշխատավորական մասսաներին, քան բուրժուական դեմոկրատիայի և պարլամենտարիզմի որով, վոր պատգամավորներ ընտրեն և հետ կանչեն բանվորներին ու դյուրացիներին համար ամենահեշտ և մատչելի յեղանակով՝ միեմամտնակ խորհրդային իշխա-

նունթիունը վոչնչացնում է պարլամենտորիզմը բացասական կողմերը, մասնավանդ որենսդիր և գործադիր իշխանութիուններն անջատումն իրարից, ներկայացուցչական ժողովներն կտրվածութիունը մասսաներից և այլն:

Յորհրդային պետութիունը մտանցնում է պետական ապարատը մասսաներին նաև նրանով, վոր բնատրական միավորը և պետութիան հիմնական բջիջը դառնում է վոչ թե տերիտորիալ շրջանը, այլ արտադրական միավորը (գործարան, ֆաբրիկա):

Կուսակցութիան խնդիրն այն է, վոր ամբողջ աշխատանքն այդ ուղղութեամբ կատարելով՝ իրագործվի իշխանութիան որդանների և աշխատավոր մասսաների հետագա մերձեցումը՝ այդ մասսաների միջոցով դեմոկրատիզմը պրակտիկայում ավելի և ևս խտութիամբ և ավելի ևս լրիվ իրագործնելու, առանձնապես պաշտոնատար անձների պատասխանատվութիուն և հաշվետվութիուն անցկացնելու ճանապարհով:

6. Մինչդեռ բուրժուական դեմոկրատիան, եսկառակ իր դեկլարացիաներին, զորքն ունեւոր դասակարգերն գործիք է դարձրել, անջատելով այն աշխատավոր մասսաներից և հակադրելով այն զրանց, քաղաքական իրավունքներն իրագործելու հնարավորութիունը ղինվորների համար վոչնչացնելով կամ դժվարացնելով, — Յորհրդային պետութիունը ձուլում է իր որդաններում, խորհուրդներում, բանվորներին և ղինվորներին՝ նրանց իրավունքների հավա-

սարութիան և նրանց շահերն մեութիան հիմունքներով: Կուսակցութիան խնդիրն է՝ պաշտպանել ու զարգացնել բանվորներն և ղինվորներն այդ միութիունը խորհուրդներում, ամբացնելով ղինված ուժի անքտիկտելի կապը պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի կազմակերպութիունները հետ:

7. Ամբողջ հեղափոխութիան մեջ քաղաքային արդունաբերական պրոլետարիատի, վարպետ աշխատավոր մասսաների ամենից շատ համակենտրոնացած, միավորված, լուսավորված և պայքարում կոխված մասի, ղեկավար դերն թշտանայալիլ է թե խորհուրդներն առաջացման մեջ և թե զբանց զարգանալու և իշխանութիան որդաններ դառնալու ամբողջ ընթացքում: Մեր Յորհրդային սահմանադրութիունն արտահայտել և այդ, վերապահելով արդունաբերական պրոլետարիատին մի շարք արտոնութիուններ՝ դյուղի համեմատաբար ավելի ցրելով մանր-բուրժուական մասսաների հանդեպ:

Համկի, պարզաբանելով գյուղի սոցիալական կազմակերպման դժվարութիուններն հետ պատմականորեն կապված այդ արտոնութիուններն ժամանակավոր բնույթը, պետք է ձգտի առջիկ ու սիստեմատիկորեն ոգտագործելու արդունաբերական պրոլետարիատի այդ դրութիունը նրա համար, վոր ի հակադրու նեղ-գոխային և նեղ պրոֆեսիոնալ շահերն, վոր կապիտալիզմն իր սնուցում բանվորներն մեջ, ավելի սերտ կերպով միացնի գյուղական պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի, այլև միջին գյուղացիութիան

ամենից հետաձուգոց ու ցվել մասսաներին առաջավոր քանվորների հետ:

8. Միայն շնորհիվ պետութայն խորհրդային կազմակերպման կարող եր պրոլետարիատը հեղափոխութունը միանգամից փոքրել և հիմնելի կործանել պետութայն հին, բուրժուական, չլիտիլիական և դատական ապարատը: Սակայն լայն մասսաների վոչ-բազմակամաչափ բարձր կուլտուրական մակարդակը, մասսաների կողմից պատասխանատու դերքերում առաջ քաշված աշխատողների անհրաժեշտ փորձառութայն բացակայութունը կառավարման գործում, ծանր պայմաններում հին դպրոցի մասնադեաներին արագությամբ գործի հրավերելու անհրաժեշտությունքը և այն վր քաղաքային ընկերները ամենազարգացած խավը վերցված և ղինվորական աշխատանքի, խորհրդային կարգերում բյուրոկրատիզմի մասնակի վերածնունդ են առաջացրել:

Ամենավճահական պայքար մղելով բյուրոկրատիզմի դեմ՝ Համեկ այդ չարիքի լրակատար հաղթահարման համար պաշտպանում և հեռեկյալ միջոցները:

1) Պարտադիր կերպով ներդրավել խորհրդի յուրաքանչյուր անդամին՝ պետութայն կառավարման ասպարեզում վորոշ աշխատանք կատարելու համար:

2) Հանրագրարը փոխել այդ աշխատանքներն այնպես, վոր նրանք ստորձանաբար ընդգրկեն կառավարման բոլոր ճյուղերը:

3) Աստիճանաբար ներդրավել գլխովին ամբողջ աշխատավոր բնակչութունը պետութայն կառավարման աշխատանքին մասնակցելու համար:

Բոլոր այս միջոցները լրակատար և բազմակողմանի գործադրութունը լինելով հետագա քայլը այն ճանապարհի, վորը վրա կանգնած եր Պարլիզի կոմունան, և կառավարման ֆունկցիաները պարզացումը՝ աշխատավորների կուլտուրական մակարդակը բարձրացնելով՝ տանում են դեպի պետական իշխանութայն վոչնչացումը:

## Ա.Զ.Գ.ՍԵՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎՍՈՒՄ

9. Աղբային հարցում Համեկի դեկավարվում և հետեյալ գրություններով:

1) Յեւակեա և ընդունվում տարբեր ազգությունների պրոլետարները և կիսապրոլետարները մերձեցման քաղաքականությունը՝ կալվածատերերի և բուրժուազիայի տապալման նպատակով միատեղ հեղափոխական պայքար մղելու համար:

2) Ապատակ ունենալով հաղթահարել ճնշված յերկրները աշխատավոր մասսաները անվատահությունը դեպի այդ յերկրները ճնշած պետությունների պրոլետարիատը, անհրաժեշտ և ամեն մի աղբային խմբակցութայն բոլոր և յուրաքանչյուր տեսակի արտոնությունների վոչնչացում, ազգությունների լրակատար իրավահավասարություն, պետականորեն անվատիլու իրավունքի ճանաչումը գաղութների և անիրավահավասար ազգությունների համար:

3) Նույն նպատակով, վորպես դեպի լրակատար

միությունն տանող անցումնային ձևերից մեկը, կրօնակցությունն առաջադրում է խորհրդային տիպով կազմակերպված պետությունների ֆեդերատիվ միավորումը:

4) Այն հարցում, թե ո՞վ է ազդային անջատման կամքի կրողը, Համկե կանգնած է պատմական դասակարգային տեսակետի վրա, հաշվի առնելով թե իր պատմական զարգացման վոր աստիճանի վրա յե կանգնած այժալ ազգը՝ միջնադարից դեպի բուրժուական դեմոկրատիա, թե՛ բուրժուական դեմոկրատիայից դեպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիա տանող ճանապարհի վրա:

Համենայն դեպս այն ազգերը պրոլետարիատի կողմից, վոր ճնշող ազգեր են յեղել, անհրաժեշտ է, վոր առանձին դեմոկրատիան և առանձին ուղարկություն գործ դրվի ճնշված կամ անիրավահավասար ազգերի աշխատավոր մասաների ազգային զգացմունքները մնացորդների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականությամբ է հնարավոր պայմաններ ստեղծել միջազգային պրոլետարիատի ազգայնորեն այլասեռաբերելի իրոք ամուր, հոժարակամ միության համար, ինչպես այդ ցույց տվեց մի շարք ազգային խորհրդային հանրապետությունները՝ Խորհրդային Ռուսաստանի շուրջը միավորվելու փորձը:

10. Ռազմական բնագավառում կուսակցության խնդիրները սահմանվում են հետևյալ հիմնական դրություններով.

1) Ի մպերիալիզմի կազմալուծման և աճող քաղաքացիական պատերազմի դարաշրջանում հնարավոր չե վոչ պահպանել հին բանակը, վաչ նորը կազմակերպել այսպես կոչված ապագատակարդային կամ համազգային հիմքերի վրա: Գաբմիլը բանակը վորպես պրոլետարական ղեկավարության գործիք՝ անհրաժեշտորեն պետք է ունենա բացորոշ դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի բացառապես պրոլետարիատից և սրան մոտիկ՝ գյուղացիության կիսապրոլետարական խավերից: Միայն դատակարգելի վոչնչացման կապակցությամբ նմանորինակ դատակարգային բանակը կվերածվի համաժողովրդական սոցիալիստական միլիցիայի:

2) Անհրաժեշտ է բոլոր պրոլետարներին ու կիսապրոլետարներին ամենալայն չափով սովորեցնել ռազմական գործը և համապատասխան առաքիլաների դասավանդություն մտցնել դպրոցում:

3) Կարմիր բանակի ռազմական ուսուցման ու դաստիարակման աշխատանքը կատարվում է դասակարգային համախմբման և սոցիալիստական լուսավորության հիմունքով: Ուստի անհրաժեշտ են հուսալի և անձնվեր կոմունիստներից քաղաքական կոմիտարներ ռազմական պետերին կից, և կոմունիստական

բջիջները կազմակերպում յուրաքանչյուրը զորամասում՝ ներքին գաղափարական կապ և գլխտակից ղեկսցելիլու- նա հաստատելու համար:

4) Ի հակահղիւս հին բանակի կառուցվածքի անհրաժեշտ է՝ զուտ զորանոցային ուժուցման բստ կարելուն կարճ ժամկետ, զորանոցների մերձեցում ռազմական և ռազմա-քաղաքական դպրոցների տիպին՝ ըստ կարելուն սերտ կապ հաստատել զինվորական կազմակերպութիւնները և Ֆարբրիկաները, գործարանների, արհեստակցական միութիւնները, գյուղական չքավորութիւն կազմակերպութիւնները հետ:

5) Յերետասարդ հեղափոխական բանակին կարող է տրվել անհրաժեշտ կազմակերպական կապ և կա- յունութիւն գլխտակից բանվորները և գյուղացիները միջից յեւած, առջին նվազ թիւով ստորին, հրամա- նատարական կազմի ոգնութիւնը միայն: Այսին ըն- դունակ, յետանդուն և սոցիալիզմի գործին նվիրված զինվորներին հրամանատարական պաշտոնները հա- մար պատրաստելը, այդ պատճառով, բանակի ստեղծ- ման գործում կարեւորագույն խնդիրներից մեկն է:

6) Անհրաժեշտ է ամենալայն կիրպով օգտագործել և կիրառել վերջին համաշխարհային պատերազմի ուղեբատիվ և տեխնիկական փորձը: Մյս կապակցու- թիւնը անհրաժեշտ է բանակի կազմակերպման և նրա ուղեբատիվ ղեկավարութիւն գործին լայնորեն ներ- դրավել հին բանակի դպրոցն անցած զինվորական մասնազետներին: Իր հերթին, այսպիսի ներգրավման անհրաժեշտ պայմանն է բանակի քաղաքական ղեկա-

վարութիւնը և հրամանատարական կազմի ամենա- կողմանի վերահսկողութիւնը կենտրոնացնել բանվոր դասակարգի ձեռքում:

7) Հրամանատարական կազմի ընտրականութիւն պահանջը, վոր ահագին սկզբունքային նշանակու- թիւն ուներ բուրժուական բանակի վերաբերմամբ, վորտեղ հրամանատարական կազմը ջնկում և դաս- տիարակվում էր վորպէս զինվորները և զինվորները միջոցով՝ աշխատավոր մասսաները դասակարգային հպատակեցման ապարատ, միանգամայն կորցնում է իր սկզբունքային նշանակութիւնը դասակարգային բանվորական և գյուղացիական կարմիր բանակի վե- րաբերմամբ: Ընտրականութիւն և նշանակովութիւն հնարավոր համակցումը (комбинация) հեղափոխա- կան դասակարգային բանակին թիւադրվում է գործ- նական նկատառումներով և կախված է գործմաների կազմավորման առկա մակարդակից, համախմբվածու- թիւնն աստիճանից, հրամանատարական կազմերի առկայութիւնից և այլն:

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

11. Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանութիւնը և առանց մնացորդի վերացնելով բուրժուական տի- րապետութիւնն օրգանները — նախկին կառուցվածքի դատարանները՝ պրոլետարական ղեկավարտիւն բուրժուական ղեկավարտիւնի «դատավորները ըն- տրականութիւնը ժողովրդի միջոցով» Ֆորմուլի

փոխարեն արաջ և քաջել «դատավորների ընտրականութիւնն աշխատավորներից՝ միայն աշխատավորները միջոցով» դատակարարային լրդուհըր և այն կրուառել և դատարանի ամբողջ կազմակերպութեան մեջ, միաժամանակ հավասարեցնելով յերկու սեւերին բոլոր իրավունքներուամ, ինչպես դատավորների ընտրութեան, նուայնպես և դատավորների պարտականութիւնները վարելու ընթացքում:

Պրոլետարիատի և չքավոր դրուղացիութեան ամենալայն մասաներին արտադրութեան վարելուն ներգրայելու համար՝ դատարանի մեջ մտցուած և մշտապես փոխարինվող մասնակավոր դատավորատենակալները մասնակցութիւնը ցուցակները կազմելուն մասնակից դարձնելով մասսայական բանվորական կազմակերպութեաններին, արհեստակցական միութիւններին և այլն:

Նախկին տարրեր կառուցվածքի և բազմաթիւ ինստանցիաներ ունեցող դատարանների անվերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդական դատարան ստեղծելով՝ խորհրդային իշխանութիւնը պարզեցրել և դատարանի կառուցվածքը՝ դատարանը բացարձակապես մատչելի դարձնելով ընակչութեանը և վերացնելով գործավարութեան ամեն տեսակի քաջքուակները:

Վերացնելով տապալված կառավարութիւնների որենքները, խորհրդային իշխանութիւնը հանձնարարել և խորհուրդները ընտրած դատավորներին իրազործել պրոլետարիատի կամքը, գործադրելով նրա

դեկրետները, իսկ այգիլիսիների բացակայութեան կամ թերը լինելու դեպքում՝ դեկավարվել սոցիալիստական իրավադրուակցութեամբ:

Պատժի ընազայաւուում այս ձևով կազմակերպված դատարաններն արդեն հանդեցրել են պատժի ընույթն արմատապես փոխելուն՝ լայն չափերով իրազործելով պայմանական դատապարտութեանը, հասարակական պարսպանքը կիրառելով վորպես պատժի միջոց, փոխարինելով ազատադրուումը պարտադիր աշխատանքով՝ ազատութեան պահպանումով, փոխարինելով բանտերը դատախարակչական հաստատութիւններով և հնարավորութեան տարով գործադրելու ընկերական դատարանները սլրակտիկան:

Համկի հետամուտ լինելով դատարանի ապագա զարգացման այդ իսկ ձանապարհով, պետք և ձգտի նրան, վոր դատավարական պարտականութեանների կտտարմանը ղլխովին ներգրտվլլ ամբողջ աշխատավոր ընակչութեանը, և պատիժները սխտեմը վերջնականապես փոխարինվլլ դաստիարակչական բնույթ կրող միջոցները սխտեմով:

### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

12. Ժողովրդական լուսավորութեան բնագավաւում Համկի նպատակ և դնում գլուխ բերել 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխութեանից սկսած գործը՝ դրոցը բուրժուազլայի դասակարգային տե-

բապտիստութեան գործիքից դարձնել հասարակութեանը  
դասակարգերի բաժանելը լիակատար վոչնչացնելու  
գործիք, հասարակութեան կոմունիստական վերաան-  
ման գործիք:

Պրոլետարիատի գլխատուրայի շրջանում, այ-  
սինքն կոմունիզմի լիակատար իրագործումը հնարա-  
վոր գործնող պայմանները պատրաստելու շրջանում,  
դպրոցը վոչ միայն պետք է լինի առհասարակ կո-  
մունիզմի սկզբունքները տարածող, այլև պրոլետար-  
իատի դադափարական, կադմակերպական, դաստիար-  
ակչական աղղեցութեանն աշխատավոր մասնաների  
կիսապրոլետարական և վոչ-պրոլետարական խավերի  
վրա տարածողը՝ կոմունիզմը վերջնականապես հաս-  
տատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպա-  
տակով: Այդ ճանապարհին ներկայիս մոտավոր խըն-  
դիրն է՝ խորհրդային ինքնակառավարման արդեն հաստա-  
տած դպրոցական ու լուսավորական գործի հետեյալ  
հիմքերի հետագա զարգացումը:

1) Զրի ու պարտադիր ընդհանուր ու պոլիտեխ-  
նիկական (թեորիապես և գործնականորեն արտա-  
դրութեան բոլոր գլխավոր ճյուղերին ծանոթացնող)  
կրթութեան յեղևու սեռի բոլոր յերեկոսների համար  
մինչև 17 տարեկանը:

2) Ստեղծել նախադպրոցական հիմնարկութեանն-  
ների՝ մտերների, պարտեղների, ոջախների ցանց և  
այլն, հասարակական դաստիարակութեանը բարելա-  
վելու և կնոջ ազատագրելու նպատակով:

3) Լիովին իրագործել միասնական աշխատան-

ային դպրոցի սկզբունքները՝ կատարելով դասավան-  
ումը մայրենի լեզվով, յերկու սեռի յերկտաներին  
հատեղ սովորեցնելով, անպայման աշխարհիկ, այ-  
նչև վերև կրոնական ազդեցութեանից ազատ,  
տուցման և հասարակական-արտադրողական աշ-  
ատանքի միջև սերտ կապ հաստատող, կոմունիս-  
տական հասարակութեան համար բաղմակողմանի  
արգացում ունեցող անդամներ պատրաստող դպրոց:

4) Բոլոր սովորողներին պետութեան հաշվին մա-  
սկարարել սնունդ, հագուստ, վոտնաման, ուսում-  
ական պետույքներ:

5) Պատրաստել կոմունիզմի դադափարներով  
ըշնչված՝ լուսավորութեան աշխատողների նոր  
սերեր:

6) Ներգրավել աշխատավոր բնակչութեանն ակտիվ  
սանակցութեան ցույց տալու լուսավորութեան գոր-  
ն («ժողովրդական կրթութեան խորհուրդներ»)՝  
սրբացում, դրադեաների մոբիլիզացիա և այլն):

7) Յույց տալ պետական բաղմակողմանի ոգ-  
ութեան բանվորների և դուրապիներին ինքնակրթ-  
ութեան և ինքնադարգացման գործին (արտադպրո-  
ական կրթութեան հաստատութեաններին ցանցի  
սեղծում—դրադարաններ, հասակավորները դպրոց,  
դոկտրական տներ և համալսարաններ, դոստրեսաց-  
ր, դասախոսութեաններ, կինեմատոգրաֆներ, ստու-  
աներ և այլն):

8) Լայնորեն զարգացնել արհեստակցական կրթ-  
ութեանը 17 տարեկանից բարձր հասակ ունեցող-

ների համար, բնականոր պոլիտիկանիկական գիտե-  
լիքների հետ միասին:

9) Բոլոր սովորել ցանկացողների և առաջին հեր-  
թին բանվորների համար լայն կերպով մատչելի  
դարձնել բարձրագույն դպրոցի լսարանները, բար-  
ձրագույն դպրոցում դասավանդելու գործունեյու-  
թյան ներգրավել բոլոր նրանց, ովքեր կարող են  
այնտեղ ուսուցիչ, թարմ գիտական ուժերի և կա-  
ֆեդրի միջև յեղած բոլոր և ամեն տեսակի աշխե-  
տական արգելքների վերացում. սովորողների նյու-  
թական ապահովում՝ պրոլետարներին և գյուղացի-  
ներին բարձրագույն դպրոցից ոչուվելու փաստական  
հնարավորութուն տալու նպատակով:

10) Հավասարապես անհրաժեշտ և աշխատավոր-  
ների համար բանալ և մատչելի դարձնել արվեստ-  
ների ամբողջ դանձարանքը, արվեստներ, վազոնը  
ստեղծվել են նրանց աշխատանքի շահագործման հի-  
ման վրա ու մինչև այժմ շահագործողների բացառիկ  
տրամադրության տակ են գտնվել:

11) Զարգացնել կոմունիստական դադափարների  
ամենալայն պրոպագանդը և սյռ նպատակով ոչ-  
սագործիկ պետական լեյխանության տպարատը և  
միջոցները:

13. Կրոնի վերաբերմամբ Համ ԿԿ չի բավականա-  
նում արդեն իսկ որևնականացված՝ յեկեղեցին պե-  
տությունից և դպրոցը յեկեղեցուց բաժանելով, ալ-  
սինքն այն ձեռնարկումներով, վորոնք բուրժուական  
դեմոկրատիան առաջադրում և իր ծրագրերի մեջ,  
սակայն աշխարհում վոչ մի տեղ դուր չի բերել,  
չնործիվ կադրտալի և կրոնական պրոպագանդի միջև  
յեղած բազմատեսակ փաստական կապերի:

Համ ԿԿ դեկլավարվում և այն համոզումով, թե  
մաստաների բովանդակ հասարակական տնտեսական  
գործունեյության սլանաչափության ու գիտակցու-  
թյան լրագործումն և միայն, վոր կարող և լիովին  
մնացնել կրոնական նախապաշարումները: Կուսակ-  
ցությունը ձգտում և լիովին փչրել հարստանարող  
դասակարգերի և կրոնական պրոպագանդի կազմա-  
կերպության միջև յեղած կապը՝ նպաստելով աշխա-  
տավոր մաստաների փաստական ալատաբրմանը կրո-  
նական նախապաշարումնեներեց և կազմակերպելով  
ամենալայն դիտական-լուսավորական և հակակրո-  
նական պրոպագանդ: Ընդամեն անհրաժեշտ և հո-  
գատարությամբ խուստփել հավատացյալների գլխաց-  
մունքների ամեն տեսակի վիրավորանքից, վորը տա-  
նում և դեպի կրոնական մոլեռանդության ամրա-  
ցում միայն:

14. Անշնդ շարունակիլ և ավարտել բուրժուազիայի սեփականագրիումը, վորն սկսված և և իր դիւխայիդ և հիմնական մասերում արդեն վերջացրած և, անշնդ շարունակիլ և ավարտել արտադրութեան ու շրջանառութեան միջոցները Խորհրդային հանրապետութեան, այսինքն բոլոր աշխատավորների ընդհանուր սեփականութիւն դարձնելը:

15. Իբրև խորհրդային իշխանութեան ամբողջ տնտեսական քաղաքականութիւնը վորոշող դիւխայիդ և հիմնական խնդիր համարել յերկրի արտադրողական ուժերի բարձրացումը բոլոր միջոցներով: Եկատի ունենալով այն ծանրագույն ավերածութիւններ, վոր ապրում և յերկիրը, պետք և բնակչութեան անհրաժեշտ միջնակները քանակն անմիջապէս և ըստ ամենայնի շատացնելու գործնական նպատակին յենթարկված լինեն մնացած բոլորը: Այդ ուղղութեամբ ստացված գործնական հետեանքներով պետք և չափվի ժողովրդական տնտեսութեան հետ կապված խորհրդային յուրաքանչյուր հիմնարկութեան աշխատանքը հաջողութիւնը: Ընդամին անհրաժեշտ և առաջին հերթին ուղղութիւնը դարձնել հետեայլի վրա.

1) Իմպերիալիստական տնտեսութեան կազմալուծումը խորհրդային ղինարարութեան առաջին ժամանակաշրջանին ժառանգութիւն և թողել վորոշ քա-

ռոսայնութիւն արտադրութեան կազմակերպման և կառավարման մեջ: Ավելի ստիպողականորեն և առջ քաշվում, իբրև արմատական խնդիրներէց մեկը, յերկրի ամբողջ տնտեսական գործունեյութեան առաջնագույն միավորումը մի համապետական պլանով, արտադրութեան առաջիկ կենտրոնացումը՝ ըստ առանձին ճյուղերի ու ճյուղերի խմբերի այն միավորելու և լավագույն արտադրական միավորները մեջ այն կենտրոնացնելու իմաստով: Այլև տնտեսական խնդիրներն արագ իրագործելու իմաստով, արտադրական ամբողջ ապարատի առաջիկ կարգավորումը, յերկրի բոլոր նյութական միջոցների նպատակահարմար և խնայողաբար ոգտագործումը:

Ընդամին անհրաժեշտ և հոգ տանել մյուս ժողովուրդների հետ տնտեսական աշխատակցութիւնը և քաղաքական կապերն ընդլայնելու մասին, միաժամանակ ձգտելով միասնական տնտեսական պլան սահմանել զբանցից նրանց հետ, վորոնք արդեն խորհրդային կարգերը յեն անցեր:

2) Մանր և տնայնագործական արդյունաբերութեան նկատմամբ անհրաժեշտ և լայն կերպով ոգտագործել այն՝ տնայնագործներին պետական պատվերներ տալու միջոցով, տնայնագործութիւնը և մանր արդյունաբերութիւնը մտցնել հում նյութի և վառելիքայնութի մատակարարման ընդհանուր պլանի մեջ, այլև նրա ֆինանսական ոգնութիւնը, առանձին տնայնագործներին, տնայնագործական արեակներին, արտադրական կողերատիպներին և մանր ձեռնար-

կուժյուններին ավելի խոշոր արտադրական և ար-  
դյունաբերական միավորներին միջ միավորելու պայ-  
մանով. նման միավորումներին խրախուսել նրանց  
տնտեսական առավելություններ տալու միջոցով,  
վորոնք նպատակ ունեն վերացնել տնայնադրածներին՝  
մասն արդյունաբերողներ դառնալու ձգտումը և  
ստեղծին արտադրության այդ հետամնաց ձևերի  
անհիվանդադին փոխանցումն ավելի բարձր՝ խոշոր  
մեքենայացված, ինդուստրիայի:

3) Հանրայնացրած արդյունաբերության կազ-  
մակերպական ապարամն առաջին հերթին պետք է  
հենվի արհեստակցական միություններին վրա: Նրանք  
պետք է միշտ ավելի և ավելի ազատադրվեն ցեխա-  
յին սահմանափակութուններից ու դառնան խոշոր ար-  
տադրական միավորումներ, վորոնք բնդդրկում են  
արտադրության տվյալ ճյուղի աշխատավորներին մե-  
ծամասնությունը, իսկ աստիճանաբար նաև բոլորին  
գլխովին:

Խորհրդային հանրապետության որինքները և  
հաստատված պրակտիկայի համաձայն արդեն մաս-  
նակցութուն ունենալով արդյունաբերության կա-  
ռավարման բոլոր տեղական և կենտրոնական որդան-  
ներում՝ հետագայում արհեստակցական միություն-  
ները պետք է փաստորեն իրենց ձեռքում կենտրո-  
նացնեն ամբողջ ժողովրդական տնտեսության, վոր-  
պես միասնական տնտեսական ամբողջության, բո-  
վանդակ կառավարումը: Այդպիսով՝ ապահովելով  
կենտրոնական պետական կառավարման, ժողովրդա-

կան տնտեսության և աշխատավորության լայն մաս-  
տաները անքակտելի կապը՝ արհեստակցական միու-  
թյունները պետք է վերջիններին ամենալայն չափով  
մասնակից անին տնտեսավարության անմիջական  
գործին: Արհեստակցական միությունները մասնակ-  
ցությունը տնտեսավարությանը և միաժամանակ  
նրանց միջոցով լայն մասաները ներգրավումը դրան՝  
խորհրդային իշխանության տնտեսական ապարատի  
բյուրեղատացման դեմ պայքարելու գլխավոր միջոցն  
է և ճնարավորություն և տալիս իրոք ժողովրդական  
վերահսկողություն հաստատելու արտադրության  
արդյունքներին վրա:

4) Ժողովրդական տնտեսության պլանաչափ  
դաբաղցման նպատակով պետության մեջ յեղած ամ-  
բողջ բանվորական ուժի անհրաժեշտ առավելադույն  
ոչտադրոժումը, նրա ուղիղ բաշխումն ու վերաբաշ-  
խումը ինչպես տարբեր տերիտորիալ մարզերի,  
նույնպես և ժողովրդական տնտեսության տարբեր  
ճյուղերի միջև, պետք է կազմի խորհրդային իշխա-  
նության տնտեսական քաղաքականության մոտակա  
խնդիրը, քաղաքականություն, վորք կարող է  
իբադրոծվել նրա կողմից՝ միայն սերտ կապ պահպա-  
նելով արհեստակցական միություններին հետ: Վո-  
րոք հասարակական աշխատանքներ կատարելու հա-  
մաբ արհեստակցական միություններին մասնակցու-  
թյամբ ամբողջ աշխատունակ բնակչության գլխո-  
վին մորելիզացնելու խորհրդային իշխանության կող-

մից պետք և անհամեմատ լայն ու ավելի սխտեմատիկորեն կիրառվի, քան այդ արվել է մինչև հիմա:

5) Աշխատանքի կապիտալիստական կազմակերպման անկման պայմաններում յերկրի արտադրական ուժերը կարող են վերականգնվել ու զարգանալ իսկ արտադրութեան սոցիալիստական յեղանակը կարող է ամբանալ միայն աշխատավորների ընկերային կարգապահութեան, նրանց առավելագույն ինքնագործունէիութեան, պատասխանատուութեան զետեակցութեան և աշխատանքի արդունամիտութեան փոխադարձ ամենախիտ վերահսկողութեան սահմանելով:

Այդ նպատակին հասնելը համառ, սխտեմատիկ աշխատանք է պահանջում մասնաների վերադաստիարակման դործում, վորը դուրացված է արժմ հենց շնորհիվ նրա, վոր մասսաները դործնականում տեղում են կապիտալիստին, կարվածատիրոջ և վաճառականին հետաքննելը և սեփական պրակտիկայի փորձով այն համոզման են դալիս, վոր իրենց բարեկեցութեան մակարդակը բացառապես իրենց սեփական աշխատանքի կարգապահութեանն է կախված:

Նոր սոցիալիստական կարգապահութեան ստեղծման այս աշխատանքում զխալոր դերն ընկնում է արհեստակցական միութեաններին վրա: Վերջիններս, հրաժարվելով հին ջարտնից, այդ նպատակն իրագործելու համար պետք է զործնականում կիրառեն ու փորձեն զանազան տեսակի մեջոցառումներ, ինչպէս, որինակ, սահմանել հաշվետուութեան, արտա-

դրանքի նորմաներ, սահմանել պատասխանատուութեան հատուկ ընկերական բանվորական դոտարանների առաջ և այլն:

6) Արտադրողական ուժերի զարգացման նույն ինդիլը պահանջում է անհապաղ, լայնորեն և բազմակողմանի ոգտադործել կապիտալիզմից մեղ ժառանգութեան թրոուն զետուութեան և տեխնիկայի մասնադետներին, շնայած այն բանին, վոր նրանք ջատ դեպքերում անխուսափելիորեն տողրված են բուրժուական աշխարհայեցողութեամբ ու սովորութեաններով: Կուսակցութեանը համարում է, վոր վերջացել է այս խալի հետ սուր պայքարի ջրջանը, վորն առաջ կը եր յեկել նրա կողմից կազմակերպված սարտածի ջնորհիվ, քանի վոր այդ սարտածն ընդհանուր առմամբ խորնակված է: Մերտ կապ պահպանելով արհեստակցական միավորումներին հետ, կուսակցութեանը պետք է առաջ տանի իր նախկին դիծը. մի կողմից ամենախոջը քաղաքական գլխումն իսկ չանել ավյալ բուրժուական խալին և անխոճանդի նրա հակահեղափոխական ամեն մի վոտնճողութեանը, իսկ մյուս կողմից՝ նույնքան անխոճ կովել այն կեղծ-արմատական, բայց իրոք տղետ մեծամտութեան դեմ, թի իրը աշխատավորներն լվիճակի յեն հաղթահարել կապիտալիզմն ու բուրժուական կարգերը՝ չուսանելով բուրժուական մասնագետներին, չողտադործելով նրանց, չանցնելով նրանց հետ միասին աշխատանքի յերկարատե դարոց:

Զգտելով ամեն մի աշխատանքի վարձատրութեան

հավասարութեան ու լիակատար կոմունիզմի, խորհրդ-  
դային իշխանութեանը չի կարող իր խնդիրը համա-  
րել այդ հավասարութեան անհաղաղ իրազորումը  
տվյալ մոմենտում, յերբ կապիտալիզմից կոմունիզմին  
անցնելու միայն առաջին քայլերն են արվում: Ուստի  
անհրաժեշտ է մի վորոշ ժամանակ դեռ պահպանել  
մասնադեղատների ավելի բարձր վարձատրութեանը,  
վորպեսզի նրանք կարողանան աշխատել վոչ թե  
վատ, այլ ավելի լավ, քան առաջ, և հենց նույն  
նպատակի համար չի կարելի հրաժարվել պրեմիա-  
ների սխեմից՝ ամենից ավելի հաջող և մանավանդ  
կազմակերպչական աշխատանքի համար:

Հավասարապես անհրաժեշտ է բուրժուական  
մասնադեղատներին դնել ընկերային ընդհանուր աշ-  
խատանքի պայմաններում ձեռք ձեռքի տված շարքա-  
յին բանվորների մասալի հետ, բանվորների, վորոնք  
զեկավարվում են դիտակից կոմունիզմի կողմից,  
և դրանով նպաստել, վոր կապիտալիզմի կողմից  
իրարից բաժանված Ֆրիլիկական և մտավոր աշխա-  
տողները փոխադարձաբար հասկանան և մոտենան  
իրար:

7) Խորհրդային իշխանութեանն արդեն մի շարք  
միջոցներ և ձեռնարկել, վորոնք նպատակ ունեն  
զարգացնել դիտութեանը և այն մոտեցնել արտա-  
դրութեանը. ստեղծել նոր պիտակահան - դրժնական  
խնամակալություններ, լաբորատորիաների, հետազոտական  
կայանների, նոր տեխնիկական մեթոդների, կատա-  
րելագործումների և պլուտների ստուգման փորձնական

արտադրութեաններին մի ամբողջ ցանց, բոլոր պե-  
տական ուժերը ու միջոցները հաշվառում և այլն:  
Համից պաշտպանելով բոլոր այդ միջոցները՝ ձգտում  
է նրանց հետագա զարգացմանը և դիտական աշխա-  
տանքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն  
աբտադրողական ուժերի բարձրացման կապակցու-  
թյամբ:

## ՊՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

16. Խորհրդային իշխանութեանը իրագործելով  
հողի մասնավոր սեփականատիրութեան լիակատար  
վերացումը՝ անցել է արդեն մի շարք միջոցներ  
կենսագործմանը, վորոնք ուղղված են խոշոր սոցիա-  
լիստական հողագործութեան կազմակերպմանը:

Այդ միջոցներից ամենակարևորներն են.

1) Խորհրդային տնտեսութեաններին, այսինքն՝  
խոշոր սոցիալիստական տնտեսութեաններին կադրա-  
կերպումը. 2) աջակցութեան ցույց տալ հողը հա-  
սարակականորեն մշակող հասարակութեաններին,  
այլև ընկերութեաններին. 3) կազմակերպել պետական  
ցանքս բոլոր չցանված հողերի, ում ել նրանք պատ-  
կանելիս լինեն 4) բոլոր ագրոնոմիական ուժերի պե-  
տական մոբիլիզացիա՝ դյուրատնտեսական կուլտու-  
րան բարձրացնելու ուղղութեամբ յետագայում միջոց-  
ները դիմելու համար. 5) աջակցութեան ցույց տալ  
պուլգատնտեսական կոմունիստներին, իբրև հողագործ-

նեքի միանգամայն հոժարակամ միությունները, խո-  
ջոր ընդհանուր տնտեսություն վարելու համար:

Բոլոր այդ միջոցները դիտելով իբրև գյուղա-  
տնտեսական աշխատանքի արտադրողականության  
բացարձակ անհրաժեշտ բարձրացման մեակ ճանա-  
պարհ՝ Համկի ձգտում է ըստ կարելույն լիակատար  
կերպով կենսադործել այդ միջոցները, տարածել  
նրանց յերկրի ավելի հետամնաց ջրջաններում և  
նույն ուղղությամբ հետագա քայլերի:

Համկի առանձնապես պաշտպանում է.

1) գյուղատնտեսական միջերջները վերամշակ-  
մամբ զբաղված գյուղատնտեսական կոոպերացիայի  
ամեն ձևի պետական ոժանդակությունը.

2) լայն կերպով կիրառված հողի մեկտրացիայի  
սխտեմբ.

3) չքավոր և միջակ գյուղացիութայնը ինվեն-  
տարով լայն ու պլաննային մատակարարելը վար-  
ձատու կայանները միջոցով:

Հաջի առնելով այն համադամանքը, վոր մանր  
գյուղացիական տնտեսությունը դեռ յերկար պիտի  
դոյություն ունենա, Համկի ձգտում է իրագործել  
մի շարք միջոցներ, վորոնք ուղղված են գյուղացիական  
տնտեսության արտադրողականության բարձրացմանը:  
Սյդդիսի միջոցներ են հանդիսանում՝ 1) գյուղացիա-  
կան հողդատարածման կարգավորումը (հողերի  
ցցվածության, հեռավորության և թյուն վերացումը):  
2) գյուղացիներին լավորակ կոչացհատելիներ և արհես-  
տական պարարտանյութի մատակարարելը. 3) գյու-

ղացիական անտունները և անոթի լավացումը.  
4) ագրոնոմիական գիտելիքներ տարածելը. 5) գյուղա-  
ցիներին ագրոնոմիական ոգնություն ցույց տալը.  
6) գյուղացիները ինվենտարի նորոգումն խորհրդային  
նորոգող արհեստանոցներում. 7) վարձատու կետերի,  
փորձակայանների, ցուցադասերը կազմակերպումն.  
8) գյուղացիական հողերի մեկտրացիան:

17. Նկատի ունենալով, վոր հակադրությունը  
քաղաքի և գյուղի միջև գյուղի տնտեսական և կուլ-  
տուրական հետամնացության ամենախոր հիմքերից  
մեկն է, իսկ այնքան խոր ճնշածով դարաբջջա-  
նում, ինչպիսին է ներկայիսը, թե քաղաքը և թե՛  
գյուղը այլասերման և կործանման անմիջական  
վտանգի առջ է դնում, Համկի այդ հակադրության  
վոջնչացման մեջ է տեսնում կոմունիստական շինա-  
բարության հիմնական խնդրներից մեկը է, ընդհա-  
նուր միջոցները շարքին, անհրաժեշտ է դանում՝  
արդյունաբերական բանվորներին լայնորեն և պլա-  
նային ներգրավել կոմունիստական շինարարության  
հողագործության մեջ, անհրաժեշտ է համարում այդ  
նպատակներով խորհրդային իշխանության կողմից  
արդեն հիմնված համապետական ճեանվորական  
ոժանդակող կոմիտեի շ գործունեյության դարա-  
ցումը և այլն:

18. Գյուղում կատարելիք իր ամբողջ աշխատան-  
քում Համկի առջվտ պես հենվում է նրա պրոլետա-  
րական և կիսապրոլետարական խավերի վրա, կաղ-

մակերպում է նախ և առաջ նրանց իբրև ինքնուրույն ուժի, սակզծելով գյուղում կուսակցական բջիջներ, չքավորութան կազմակերպություններ, գյուղի պրոլետարներն ու կիսապրոլետարներն հատուկ ախյի արհեստակցական միություններ, և այլն, բոլոր միջոցներով մերձեցնելով նրանց քաղաքային պրոլետարիատին և պոկելով նրանց գյուղական բուժօժուկիայի ու մանր սեփականատիրական շահերի ազդեցությունից:

Կուլակներն, գյուղական բուժօժուկիայի նկատմամբ Համկի քաղաքականությունն է՝ վճռական պայքար մղել նրանց շահարժողական վտանձագությունների դեմ, ճնշել նրանց դիմադրությունը խորհրդային քաղաքականությանը:

Սիջակ գյուղացիության նկատմամբ Համկի քաղաքականությունն է՝ նրան աստիճանաբար և պլանաչափ կերպով սոցիալիստական շինարարության մեջ ներգրավել: Կուսակցությունը իր խնդիրն է համարում անջատել նրան կալակներից, նրան գրավել բանվոր դասակարգի կողմը՝ ցույց տալով ուշադիր վերաբերմունք դեպի նրա կարիքները, պայքարելով նրա հետամնացութան դեմ գաղափարական ներգործության միջոցներով, վնչ յերբեք ճնշման միջոցներով, ձգտելով ամեն գեպքում, վորտեղ նրա կենսական շահերն են շոշափվել, գործնական համաձայնության դալ նրա հետ, զիջումներ անելով նրան սոցիալիստական վերակառուցումների կիսաաման յեղանակները վորոշելու մեջ:

10. Բարխաման բնադավառում ներկայումս խորհրդային իշխանության խնդիրն է՝ անշեղ կերպով ջարուհանկել տեևարի փոխարինումը միջերջների պլանաչափ, համապետական մասշտաբով կազմակերպված բաշխումով՝ նպատակ է հանդիսանում ամբողջ բնակչությունը կազմակերպել սպառողական կոմունաների միասնական ցանցում, վորոնք ամենամեծ արագությամբ, պլանաչափությամբ, խնայողությամբ և աշխատանքի նվազագույն ծախսումով պետք է կարողանան բաշխել բոլոր անհրաժեշտ մթերքները՝ խստորեն կենտրոնացնելով ամբողջ բաշխման ապարատը:

Սպառողական կոմունաների և նրանց միավորումների հիմքում պետք է դրված լինի գոյություն ունեցող համարադաքացիական և բանվորական կոոպերացիան, վոր սպառողների ամենախոշոր կազմակերպությունն է և կապիտալիզմի սլատմությամբ ամենից զատ նախապարաստված՝ բաշխման մասսայական ապարատն է:

Սկզբունքորեն միակ ուղիղը համարելով կոոպերատիվ ապարատի այդ տեսակի հետագա կոմունիստական դարձացումը՝ և վոչ թե այն մի կողմ նետելը, Համկի սիստեմատիկորեն պետք է շարունակի իր քաղաքականությունը, պետք է պարտավորեցնի կուսակցության բոլոր անդամներին աշխատել կոոպերատիվներում, կոմունիստական վորով ուղղություն

տա սրանց, նաև արհեստակցական միությունները  
աջակցութեամբ դարգացնել կոոպերատիվում մեծավոր-  
ված աշխատավոր բնակչութեան ինքնազորածուկու-  
թյունը և կարգապահութիւնը, հասնել այն բանին,  
վոր ամբողջ բնակչութեան ընդգրկվել կոոպերատիվ-  
ների կողմից, և վարպետի այդ կոոպերատիվները  
ձուլվեն մի միասնական, վերից վար ամբողջ խորհրդ-  
դային հանրագիտութիւնն ընդգրկող կոոպերատիվ  
մեջ, վերջապես, և ամենապլանավորը, պրոլետարիատի  
գերակշռող ազդեցութիւնը աշխատավորները մնացած  
խավերի վրա մշտապես ապահովված լինել և վոր ամե-  
նուրից դործնականում փորձվեն տարբեր միջոցներ,  
վորոնք հեշտացնում են և իրագործում հիս կապի-  
տալիստական արդի մանր-բուրժուական կոոպերա-  
տիվների փոխանցումը սպառողական կոմունաների,  
վորոնք ղեկավարվում են պրոլետարները և կլոսպրո-  
լետարները կողմից:

### ՓՈՂԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԴԱՎԱՌՈՒՄ

20. Խուսափելով Պարիզի կոմունայի սխալնե-  
րից՝ խորհրդային իշխանութիւնը Ռուսաստանում  
միանգամից զբաղեց Պետական բանկը, ապա անցավ  
մասնավոր առևտրական բանկերի ազգայնացման, ձեռ-  
նարկից ազգայնացրած բանկերը, խնայողական գան-  
ձարկղները Պետական բանկի հետ միավորելը, այդպի-  
սով ստեղծելով խորհրդային հանրապետութեան միաս-

նական ժողովրդական բանկի հիմքը և բանկը ֆինան-  
սական կապիտալի տիրապետութեան անտեսական  
կենտրոնից ու շահադործողների քաղաքական տիրա-  
պետութեան դործիքից վերածեց բանվորական իշխա-  
նութեան դործիքի ու անտեսական հեղափոխման լծակի  
նպատակ դնելով խորհրդային իշխանութեան սկսած  
դործի հետագա հետևողական ավարտումը, Համկի  
առաջին հերթին առաջ է քաշում հետևյալ սկզբունք-  
ները՝

- 1) ամբողջ բանկային գործի մոնոպոլիզացիան  
խորհրդային պետութեան ձեռքում:
- 2) բանկային ոպերացիաները արմատական փո-  
փոխումն ու պարզեցումը՝ բանկային ապարատը վե-  
րածելով խորհրդային հանրապետութեան միակերպ  
հաշվառման և բնագնանուր հաշվապահութեան ապա-  
րատի Պլանաչափ հասարակական անտեսութեան կազ-  
մակերպմամբ այդ կվոչնչացնել բանկը և այն կվե-  
րածի կոմունիստական հասարակութեան կենտրո-  
նական հարվապահութեան:

21. Կապիտալիզմից կոմունիզմին անցնելու ա-  
ռաջին շրջանում, քանի դեռ լիովին չի կազմակերպ-  
ված միջնադարի կոմունիստական արտադրութիւնը  
և բաշխումը, փողի վոչնչացումը հնարավոր չէ: Այդ-  
պիսի դրութեան ժամանակ բնակչութեան բուրժուա-  
կան տարրերը շարունակում են ոգտագործել իբրև  
մասնավոր սեփականութիւն մնացած ղրամանիշները,  
սպեկուլացիայի, հարստանալու և աշխատավորներին  
կողոպտելու նշանակով: Հենվելով բանկերի ազ-

դայնացման վրա, Համկի ձգտում է կիրառել մի շարք միջոցներ, վերոնք ընդլայնում են անփուլ հաշվարկի բնազավաճն ու նախապատրաստում փողերի վոչնչացումը, փողերի պարտադիր պահումը ժողովրդական բանկում, բյուջեային գրքերակները գործադրումը, փողի փոխարինումը չեկեքով, մթերքներ պտանալու իրավունք տվող կարճատև սոմսերով և այլն:

### ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

